ՆԵՐՍԷՍ ՄԵԾԻ ՎԱՐՔԻՑ ՄԻ ՊԱՏԱՌԻԿ

Երուսաղէմի Սուրբ Յակոբեանց վանքի ձեռագրերը քննելիս, բնականաբար ուշադրութիւն դարձրի նաեւ կազմերի մագաղաթեայ պահպանակների վրայ։ Պահպանակների թիւը շատ մեծ էր. բայց ինչպէս ամեն տեղ, գլխաւորապէս առնուած էին երկաթագիր Աւետարաններից։ Իրրեւ նորութիւն գտանք 8 կտոր Հին Կտակարանից, որ այլի են ընկնում իրենց ընտիր ընթերցուածներով եւ ամբողջովին արտագրելով՝ յարմար առթիւ պիտի հրատարակենք, ապա մաշտոցից, մեկնութիւններից եւ Սրբոց վարքերից հատուածներ եւ երկու թերթիկ Մեսրոպ երէցի անուամբ յայտնի Ներսէս Մեծի վարքից։

Զորս երեսը, փոքր դիրքով, պարունակում են 60 տող, որ ընագրի ձեւով արտագրած, այդպէս էլ տպագրում ենք։ Վարքի միակ հրատարակութիւնը Սոփերք Հայկականի Զ-րդ դրքոյկն է, որի հետ բաղդատեցինք մեր պատառիկը եւ գտանք այնքան խոշոր եւ բազմաթիւ տարբերութիւններ, որ անշանս չենք համարում նրա հրատարակութիւնը։

Մեր պատառիկը ներկայացնում է երկու հատուած. առաջի մասը պատմութիւն է. երկրորդը նախարարների ցանկը — լոկ անուններ։

Առաջի մասի մէջ, համեմատելով Սոփերքի էջ 29-30 (Վենետիկ, 1853) հետ, գտնում ենք 12 տարբեր ընթերցուած, երկուսը նոյն իսկ փոքրիկ պարբերութիւններ եւ ոչ թէ լոկ բառեր։ Սոփերքի մի էջը բաղկացած է 26 տողից։ Ձեռագրի կտորը մի էջից 3 տող պակաս է. եւ այդ 23 տողի մէջ 12 տարբերութիւն կայ։ Երկաթագրի ընթերցուածները, ընդհանուր առմամբ, գերազանցում են տպագրին եւ անկասկած հեղինակի բուն բնագրին են մօտենում։ Այս էլ պիտի ասել, որ մեր երկաթագիրը պատկանելով ԺԱ—ԺԲ դարուն, բաւական հեռու է բնագրի ժամանակից։ հետեւապէս գերծ չէ աղաւաղումներից, միայն ոչ այն չափով, ինչպէս բոլորագիր օրինակները են։

Ուշադրութեան արժանի է մանաւանդ երկրորդ մասը՝ նախարարների ցանկը։ Մեր պատառիկում պահուած են 50 անուն եւ այդքանի մէջ 26 տարբեր ընթերցուած կայ։ Դոցանից շատերը պահուած են տարբեր օրինակներում, որ Սոփերքի հրատարակողները իրրեւ ընթերցուածք տալիս են գրքի վերջին ծանօթութիւններում։

Ընթերցուածների տարբերութիւնները բաժանւում են այսպէս.

digitised by A.R.A.R.@

ա. Մեր Հռ. ունի իրեն միայն յառուկ ընթերցուածներ. 1, 2, 3, 5, 6, 8, 9, 12, 13, 15, 19, 20, 21, 25 եւ 26.

բ. Մեր Հռ. յանընթաց է ծանօթութեանց մէջ նշանակուած տարբեր ընթերցուածներին. 4, 7, 10, 11, 14, 16, 18.

գ. Մեր Հռ. աւելի ունի. 23.

Գանի որ առանձնապէս չենք պարտաւորուիր նախաբանների անուններով, հասատապէս վճռել չենք կարող, որ ամէն մի դէպքում մեր Հռ. ընթերցուածն է ուղիղ, բայց նոցա գերազանցութիւնը հրատարակած եւ ծանօթ բնագրից ակներեւ է եւ, բնագրի հրատարակութեան դէպքում, պէտք է 'ի նկատի առնուին

Մագաղաթեայ պահպանակ Հռ. Սրուս. № 2156.

Մագաղաթ, 19×13'3. գրութիւն 9'5×7. երկրորդ թերթը պահուած է ամբողջութեամբ 14×11. առաջի թերթի յուսանցքները կտրուած են 2 եւ 3 էջերը շատ լաւ են, իսկ 4 եւ 1. առաջի երկու տողերը չբնչով կպցրած լինելով բնագրին, եղծուել են

էջ 1.

(ի)ջանէր ի լեռնէն սինայ (1) եւ
ընդ այն առաւել զարմացեալ
էին (2) սեռաւղքն եւ յետ այնր
աքանչելեաց (3) մեծ պատարա
գաւք եւ ընծայիւք ի յիշխա
նացն յունանց. եւ ի կաթուղ
իկոսէն (4) Սեսերէ. եւ (5) եղանե
ին ի ճանանպարն. զաւրքն հա
յոց՝ քահանայապետիւն իւ
բեանց սրբոյն Ներսիսիւ եւ
այլ եպիսկոպոսաւքն՝ եւ իշ
խանաւքն հանդերձ զաւր
աց հայոց, յղարկեալք ի
հոցանէ (6). իսկ աշխարհն
հայոց՝ (7) եւ յունաց՝ եւ սասրոց

---

(1) Ս. Որպէս զնախամարգարէին Մովսէսի ի լերինն. (2) Ս. զարմանային. (3) Ս. աքանչելեացս. (4). յիշխանացն յունաց եւ յերանելի եպիսկոպոսէն. (5) Ս. եւ չիք. (6) Ս. սրբոյն... ի հոցանէ չիք. (7) Ս. հայոց չիք.

digitised by A.R.A.R.@

էջ 2.

եւ այդ սահմանքն (8) որ լսէին զը
սքանչելիսն որ եղեւ ի վերայ
մեծին Ներսիսի, եւ ասա
նէին ընդ առաջ նորա (9)։ ասե
լով թէ այրս այս այն է որ հոգ
ին սբ աղաւնակերպ երեւմամ
բ (10) յայտնեաց զոս քահանա
այապետ ճշմարիտ (11)։ եւ քա
զում բորոտք եւ հաշմանդ
ամք, եւ ախտաժետք եւ
այսահարք բերէին առաջի
նորա։ եւ գտանէին 'ի նմա
նէն (12) առողջութիւն։ եւ ամե
նայն ազգ երանի տային աշ
խարհիս հայոց վասն նորա —

էջ 3.

Փառաւորե՛ք։ Տաչրացի՛ք։
Ուրծեա՛յք։ Մանդակունի՛ք։
Տա՛յք։ Մեղիտենայք (13)։
Դաշտակարի՛նք (14)։ Բասե՛նք։
Մազկունի՛ք։ Սամիկոնք
երկրո՛ղք (15)։ Փերեժունիք (*)։
Մլքեա՛նք (16)։ Բագուա՛նք։
Աշտայի՛նք (17)։ Սրեզունի՛ք։
Հաշտեա՛նք (18)։ Սահառունի՛ք։
Աշխադարեա՛նք (19)։ Գնունի՛ք։
Համազասպունի՛ք։ Ակեա՛յք։
Վիժունի՛ք։ Առափտունի (20)

---

(8) Ս. սահմանք։ (9) Ս. առանէին զհետ նորա։ զի տրնեացին 'ի նը-
մանէ. եւ զայն։ ընդառաջ նորա ասելով. թէ Այս այն այր է. (10) Ս.
երեւմամբ չիմ։ (11) Ս. ճշմարիտ քահանայապետ։ (12) Ս. 'ի նմանէ.
(13) Ս. Մելիտեանք։ (14) Ս. Դաշակարինք։ (15) Ս. երկրորդ։ (*) «Փերե-
ժունիքն» ոչ-ոչ եղծել է ինքը գրիչը։ (16) Ս. Տլքեանք։ (17) Ս. Աշտաց-
եանք։ (18) Ս. Խազաեանք։ (19) Ս. Աշխադարեանք։ (20) Ս. Առափտունիք։

digitised by A.R.A.R.@

Շահատապետք (21)։
Մայթրունիք (22)։ Վահանա
ճիրապետք (23)։ Վարազատա

էջ 4.

կետանք։ ըղձ - - նք (եղծուած)
Աչրունի՛ք։ Բեւռեա՛նք (24)։
Մարդաղեանո՛ք։ Լեկան
սեա՛նք (25)։ Խորձեա՛նք (26)։ Զայ
նակա՛նք (27)։ Համբուրժեա՛նք (28)։
Կորինթեա՛նք (29)։ Բղնունի՛ք (30)։
Կղընդունիք (31)։ Զարեհա
բուա՛նք (32)։ Տարուբերարբե
ա՛նք (33)։ Հերուա՛նք (34)։ Մեհրու
նի՛ք։ Սպհունի՛ք (35)։ Բաղաքա
պե՛տք։ Բուուշեա՛նք (36)։ Սպ
անդունի՛ք։ Արտաչատե
անք։ Որսապե՛տք։ Սր
քածայտեա՛րք (37)։ Պարխ
պարունի՛ք։ Ռափսեա՛նք (38)։

ՄԵՍՐՈՊ ՎՐԴ.

---

(21) Ս. Շահոռապետք. (22) Ս. Մայթիունիք. (23) Ս. Զանահիրապետք. (24) Ս. Բառեանք. (25) Ս. Լեկանդեանք. (26) Ս. Խորձենիք. (27) Ս. Զիւնականք. (28) Ս. Համուժեանք. (29) Ս. Կորթեանք. (30) Ս. Յիմ. (31) Ս. Կղունդիք. (32) Ս. Զարեւեանք. (33) Ս. Տուրբերանեանք. (34) Ս. Բժունիմ. (աւելի) Տիմունիք. (35) (կարող է նաեւ) Ոպհունիմ. Ս. չիք. (36) Ս. Կայուշեանք. (37) Ս. Արքածոց տեարք. (38) Ս. վերջի 2 անունը յետ ու առաջ. Պատապունիք ընթերցուածով։

digitised by A.R.A.R.@